

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2019 թ. դեկտեմբերի 16-ի թիվ 4 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների և Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնների միջնորդությունը Գառնիկ Անանյանի անվան մուլտիմեդիա լաբորատորիան վերակազմավորելու և այն Գառնիկ Անանյանի անվան ինովացիոն մեդիակենտրոն վերանվանելու առաջարկով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Ս. Ս. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Դիմել ԵՊՀ ռեկտորին մուլտիմեդիա լաբորատորիայի վերակազմավորման հարցը ԵՊՀ գիտխորհրդի օրակարգում ընդգրկելու և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնելու առաջարկով:

ԼՍԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների և Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնների առաջարկը Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի սրահը (տեղեկատվական կենտրոն), ի պատիվ հայ առաջին պարբերականի՝ «Ազդարարի» հիմնադիր խմբագրի, «Հարություն Շմավոնյան սրահ» անվանակոչելու առաջարկով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Ս. Ս. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Դիմել ԵՊՀ ռեկտորին Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի սրահը (տեղեկատվական կենտրոն) «Հարություն Շմավոնյան սրահ» անվանակոչելու խնդրանքով:

ԼՍԵՑԻՆ.- Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 3-րդ կուրսի ուսանողների ատենախոսությունների նախապաշտպանության և պաշտպանության կազմակերպման աշխատանքների մասին ամբիոնների վարիչների հաղորդումը (Դ. Վ. Պետրոսյան, Ս. Ս. Հովսեփյան):

ԼՄԵՑԻՆ.- Մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի սովորողների մագիստրոսական թեզերի ղեկավարների և թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենձյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի սովորողների մագիստրոսական թեզերի ղեկավարներին և թեմաները:

ԼՄԵՑԻՆ.- Մոնպելիեի ժուռնալիստիկայի բարձրագույն դպրոցի նախաձեռնած դասախոսների վերապատրաստման առաջին փուլի արդյունքների ամփոփում (Ն. Ն. Մարտիրոսյան):

ԼՄԵՑԻՆ.- Նոր մեղիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը «Միգրացիա և լրագրություն» ուսումնամեթոդական ձեռնարկը (հեղինակներ՝ Գ. Եգանյան, Տ. Հարությունյան) տպագրության երաշխավորելու առաջարկով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենձյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Միգրացիա և լրագրություն» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԼՄԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի առկա ասպիրանտ, Լիբանանի քաղաքացի Կարինե Կիրակոսի Քեսապյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարին հաստատելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենձյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Կ. Քեսապյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել
«Հայաստան-Սփյուռք գործակցությունը հեռուստաեթերում (ՀՀ
հեռուստաընկերությունների և Սփյուռքի հեռուստաժամերի օրինակով)»
վերնագրով:

բ) Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ.
Հովսեփյանին:

ՆԻՍԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. ՔԵՍԱՊՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱԲ Ա. Ռ. ՄԵՆԵՄՇԱՆ

